«ՀԱՅԿԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ»

1868 ԹՎԻՆ

„Հայկական Աշխարհ“ օրագիրը 1868 թւին իւր չորրորդ տարին պիտի սկսէ. „Հայկական Աշխարհը“ հրատարակվելու է նոյն նպատակով, նոյն ուղղութեամբ, նոյն ոգնիւ և խմաստուն հայկական երիտասարդների աշխատակցութեամբ, որոնցից խելացի ընթերցողներ օգուտ են քաղել, սիրել են և, կյուսանք—կպարծենան.

Մեր ցանկութիւններ և մտքեր վերջին ժամանակում միանգամ գոնէ փոքր ի շատէ ազատաբար պարզեցինք.

Որտեղ արժանաւոր յօդված մի գտանք, թարգմանեցինք. Թոյլ տվվածը հրատարակեցինք. Ամէն հասարակական ցաւին ցաւակից եղանք, ամէն հասարակական կեանքի նշանին անգամ ուրախակից և գովաբան եղանք, յուսալով—գուցէ նորանով կենդանի ա ռ ո ղ ջ հասարակական կեանքը. Մեր գործերի մասին խօսեցինք, որքան ներելի եղաւ մեզ. Ամէն ներելի միջոցներով երկար ժամանակ աշխատեցինք Թիւրքիայի հայկական օրագիրները ձեռք բերելու և հասանք նպատակիս—օրագիրս Թիւրքիաբնակ Հայերի մասին Թիւրքիայի օրագիրների քաղվածներով և տեղեկութիւններով հարստացրինք. Արգելառիթ նորաձևութիւններ թողինք և օրագիրս ամսէամիս հրատարակել սկսեցինք.

Այս բոլորը կյիշենք ոչ պարծենալու, այլ հաստատելու նպատակով, թէ մենք միշտ աշխատեցինք մեր գործունէութիւնը օգտաւէտ անելու, մեր պարտքերը ճիշդ կատարելով. Վերջապէս մեր գործունէութեան առաւել մեծ ճշմարտութիւն և արժանաւորութիւն այն կհամարենք, որ . . . . սկսեցին մեզ հայհոյել, թշնամիներ բազմանալով բազմացան, և օրագիրը անկեղծ յարգողներ և ընթերցողներ գտաւ.

Մենք կցանկանք, որ եկօղ 1868 թւին կարօղանանք օրագիրս փոքր ինչ մեծացնել. Եթէ ստորագրօղների թիւը կթոյլատրէ, երբեմնապէս կիսաթերթեր ևս կհրատարակենք.

Իւրաքանչիւրին թոյլ տալով իւր անձով գրելու, օրագրիս խմբագրութիւնը պատասխանատուութիւնը գրօղներին կթողնէ,

և ինքն պատասխանատու կհամարվի միայն այն գրողների ոճին, որոնք խնդրած են խմբագրողից կանոնաւորելու նոցա ոճը, այն է Ս. Նոտինէնի, Իշխան Բագրատունու և պ. Հայասէրի ոճին.

Տարին 3 նշանաւոր նամակներ ուղարկողը, ինչպէս առաջ օրագիրս նվիրաբար կստանա.

Յօդված կամ նամակ ուղարկողներից կխնդրվի պարզ և որոշ գրելու, եթէ ոչ, գրվածը կարող է անտիպ մնալ.

Յանկացողների համար սեփական յօդվածը առանձին տետրակով ևս կտպվի, ինչպէս առաջ.

Թիֆլիսում „ՀԱՅԿԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ“ օրագրին կարելի է ստորագրվել Ա. Ենֆիաճեանի և Ս. Ալադաթեանի գրավաճառանոցներում.

Օտարաքաղաքայինները թող բարեհաճեն դառնալ ուղղակի դէպի խմբագրողը այս հասցէով։ Степану Степане. Въ Тифлисъ. Въ Редакцію армянскаго журнала „Армянскій Міръ„.

Հայկական Աշխարհ“ գինը հինգ (5) մանէթ է.

Մեր ստորագրողներից և գործակալներից կխնդրենք իւրանց ցանկութիւնը խմբագրութեանս շուտ յայտնելու. Վերջին ժամանակը եկող յունվարի 1 կնշանակվի. Այնուհետև ստորագրվողներն կարող են առանց առաջին № ի մնալ, ինչպէս և այս տարի եղաւ, որովհետև աւելորդ ծախսից ազատվելու նպատակով օրագիրս այնքան հատոր կտպվէ, որքան ստորագրողներ կան.

Շարունակելով մեր գործը, մոռանալու չենք երբէք, որ մենք պիտի կատարենք մեր պարտականութիւնը, մնացածը ունայնութիւն է. Ուստի անդադար, առանց շտապելու, մենք մեր գնացքը ուղղելու ենք միշտ դէպի առաջ.

Սորա հետ կաղօթենք միշտ Յիսուսին, որ փրկէ մեզ տգէտներից և չիմարներից. Չարերի մասին մեր գործը մենք գիտենք.

Նոյեմ. 28. 1867.

Խմբագրող—Հրատարակող Ստեփանոս Ստեփանէ.

Дозволено цензурою. Тифлисъ. 28 ноября. 1867 г.

Մելիքեանի և ընկ. տպարան։